

ՈՉ ԼԻԱՆՇԱՆԱԿ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՈՒ ՈՃԱԿԱՆ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ

Բ. Կ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ոճաբանության ուսումնասիրության համար իբրև նյութ ծառայում են յնդիի բառապաշարը, նրա քերականական կառուցվածքը, հնչյունական կազմը, և հուզարտահայտչական միջոցները: Ոճաբանությունն իր հետաքրքրությունները միջավայրը սահմանափակում է հիմնականում միայն նախադասության մակարդակում: Մինչդեռ ոճաբանությունը, լինելով լեզվական միջոցների տեղին կամ ըստ սլառաճի գործադրելու մասին գիտություն, ամենևին չի բացառում լեզվական այդ նույն միջոցների թե՛ հուզարտահայտչական և թե՛ հասկացական կողմերի միասնութան մեջ քննելը: Եթե դա այդպես է, ապա լեզվական միջոցների նշանակությունների արտահայտման բնագավառը չի սահմանափակվում մեկ կամ մի քանի նախադասությունների շրջանակներում: Դրանք իրենց իմաստային-գործառական լիարժեք դրսևորումներով աչքի են ընկնում միայն տեքստային-հաղորդակցական ծավալուն ոլորտներում: Իսկ այդ միավորների ոճական-արտահայտչական արժեքը, անկասկած, սերտորեն շաղկապված է դրանց որոշակի գործառությունների հետ: Հետևաբար, ինչպես լեզվական միավորների իրական նշանակությունները դրսևորվում են հիմնականում միայն տեքստային իրադրություններում, այնպես էլ, կարծում ենք, այդ նույն միավորների ոճական-արտահայտչական բուն արժեքները, բնականաբար, նույնպես ի հայտ են դալիս տեքստային համապատասխան իրադրություններում: Տեքստային այդ որոշակի իրադրությունների դուրս դժվար է պատկերացնել լեզվական հաղորդակցական տարրերի և՛ իմաստային, և՛ հուզական-արտահայտչական երանգ արտահայտող գործառական տարբերակները:

Այս տեսակետից հետաքրքիր է պարզել, թե տեքստում ինչպիսի վարքագիծ են դրսևորում սպասարկու բառերը:

Քննենք հետևյալ տեքստային օրինակը.

«Պահակ, անպայման, կար, գլուղը վուր ընկավ, որ Դանիլանց Ադամ քեռին մեկին բռնել է... կարտուր հանելիս է եղել, չի թողել, հրել է, հետևել էլ ասել է՝ «Մարդ աստծո, շառք քաշի, կոխողի կարտուր է, ես էլ պահակ եմ, հո էստեղ խրտվիլակ չեմ...»: Հա, Ադամ քեռին մեկին ծեծել է... Ուզեցին իմանալ՝ ինչ տեղն է խփել, ինչպես է խփել... օգնել էր, միասին հանել էին ու միասին հնարել, թե Ադամ քեռին մեկին բռնել է, և նա շատ նեղացած է ահիճորցի-հերից ընդհանրապես, Ադամ քեռուց մասնավորապես...»

Այսինքն՝ գլուղը հորանջում էր. ոչ քնած էր, ոչ արթուն» (ՀՄԵ):

Բերված գերասույթի վերջին ասույթում գործածվել է մեզ հետաքրքրող լեզվական ոչ լիանշանակ միավորը՝ ախիճե՛մ համադասական շաղկապը: Առաջին հայացքից թվում է, թե այս տարրն իր համակարգային նշանակությունից (այն է՝ ճշգրտում, մատնավորում է իմաստը՝ ավելի նիշտ, ուղղում եմ ասել նշանակությամբ) բացի, այստեղ այլ նշանակություն արտահայտել չի կարող: Մինչդեռ տեքստում նկարագրվող իրադարձությունների շարժընթացը վերլուծելիս պարզվում է, որ լեզվական տվյալ միավորը, ստանալով գործունեության լայն բնագավառ, օժտվում է բեղմնավորացման, եզրակացման ու ամփոփման նոր գործառություններով: Տեքստային քննությամբ բացահայտված համադասական շաղկապի նշանակային այդ նոր նրբիմաստները նպաստում են ի հայտ բերելու նաև նրա ոճական հնարավորությունները: Լեզվական տվյալ միավորի եզրակացնող, բեղմնավորացնող ու ամփոփող նրբերանգների դուզընթաց աչքի է ընկնում նրա գործածության դիպուկությունն ու արտա-

հայտնականությունը, որոնք ձևավորվում են ոչ միայն նշված բառի կամ ասույթի շրջանակներում, այլև, հիմնականում. ամբողջ համատեքստում:

Արդարև, միայն «Այսինքն» գյուղը հորանջում էր. ոչ քնած էր, ոչ արթուն» նախադասությամբ հնարավոր չէ պարզել ընդգծված շաղկապի գործառույթյան բուն էությունը, որից էլ, անկասկած, կախված է նրա ոճական արժեքի պահպանումը: Բայց երբ այն կապի մեջ ենք դնում տեքստում պատկերված մյուս իրադարձությունների հետ և տեղեկանում գյուղում տարածված կեղծ լուրի, նրա առաջացրած հետաքրքրասիրությունների արագ ծավալման, եղելության իրական վիճակի մասին, ապա այդքանից հետո պարզ են դառնում վերջին ասույթում հանդես եկող այսինքն համադասական շաղկապի նշված իրական գործառույթությունները, որոնց հետ էլ սերտորեն շաղկապվում են նրա ոճական-արտահայտչական վերոհիշյալ արժեքները:

Բերենք այլ օրինակ.

«Դրա համար էլ ամենից անհանգիստը դարձնի պեպենոտ կինն էր, որ ոտի պճեղների վրա, մի ձեռք մեջքին կանթած, վիզը ձգած, տղամարդկանց զլուխների արանքով նայում էր լուսամուտից և շուտ-շուտ խնդրում կաղ Մարտիրոսին՝ հետ կանչել ամուսնուն: Բայց տեսնելով ոչ մեկն իրեն չի լսում՝ մարդուն չի կանչում, մա վրդով քրթմնջում էր ինքն իրեն.

— Իճարկե, իրենց համար հանգիստ են, խեղճ մարդուն ղրկեցին կրակի առաջ...» (ՄՁՀ):

Եթե ուշադրություն դարձնենք տվյալ դեպքի նկատմամբ իր հաստատական վերաբերմունքն արտահայտող իճարկե վերաբերականին, ապա այն նշված նախադասության մեջ հանդես է գալիս պարզ է բառարանային իր սովորական նշանակությամբ: Սակայն վերաբերական տարր պարունակող շարահյուսական տվյալ կառույցը մեկուսի չէ, այլ հանդես է գալիս իբրև տեքստային առանձնացված շղթայի հարաբերականորեն ինքնուրույն հատվածներից մեկը: Հասկանալի է, որ ոչ միայն բերված հատվածների, այլև որոշակի կարևորություն ներկայացնող դրանց առանձին բաղադրիչների իմաստներն ու նշանակությունները (իրենց նրբերանգներով) լիարժեք ու բազմակողմանի զրուկվում են միայն փոխկապակցված միջավայրում, այսինքն՝ տեքստի ենթակարգային ոլորտներում:

Խացառություն չի կազմում նաև իճարկե հաստատական վերաբերականը, որի իրական գործառական արժեքը գնահատելիս չպիտի սահմանափակվել տեղայնացված որոշակի հարաբերություններով: Ավելին, ոչ միայն շարահյուսական տվյալ կառույցը, այլև բերված ամբողջ հատվածը հնարավորություն չեն տալիս լիովին ընկալել դարձնի պեպենոտ կնոջ վրդովմունքով պատճառված խոսքային հատվածում ընդգծված միավորի բուն գործառությունը: Սակայն նախորդ էջերի բովանդակությունից պարզվում է, որ թշնամական զորամաս է ներխուժել այդ բնակավայրը և մահ ու սարսափ է տարածում այնտեղ, Մարդիկ խմբերով թաքստոցներ են մտնում: Դարբին Դավթին հաղարկում են դրսից լուր բերելու ներսում մնացած նրա կինը խնդրում է հետ կանչել ամուսնուն, բայց թաքստոցում մնացածներն ուշադրություն չեն դարձնում: Այսքանից հետո արդեն ակնհայտորեն ուրվագծվում են որոշակի վերաբերմունք արտահայտող վրդովմունքով արտաբերված իճարկե միավորի հետևություն, եզրակացություն զրուկորոշ նոր գործառությունները, որոնք լրացնում, ամբողջական են դարձնում տվյալ վերաբերականի բառարանային (պարզ է, այո) նշանակությունները:

Տեքստի ենթակարգային իրադարձություններով պայմանավորվող նըշված նոր գործառությունների բացահայտումն իր որոշակի ազդեցությունն է թողնում նաև խնդրո առարկա իճարկե հաստատական վերաբերականի հուզական, զգացական մթնոլորտի վրա: Ստեղծված անտանելի իրավիճակը, ամուսնուն կորցնելու սպառնացող վտանգը կնոջ մեջ դառնապես խմորել են ահռելի ապրումների կուտակվող հորձանը, որն առանձին տազնապով հնչեղանում է իճարկե միավորի զգացական արտաբերման մեջ՝ հաղորդելով նրան հուզական, արտահայտչական հատուկ երանգ:

եվս մեկ օրինակ.

«Ոչ ոք կարծես չէր հավատում, որ մի կին կարողանար փախչել տասնող-
ների ձեռքից: Եվ երբ նա վերջացրեց՝ սկեսուրը տրորվեց, ձեռքը ծնկանը խփե-
լով».

— 'Ին', անբախտություն էր եկավ, էլի...

Ու գլուխն օրորեց ծանր թառանշելով» (ՍՁՀ):

Այժմ փորձենք աստիճանաբար հետամուտ լինել ընդգծված միավորի բուն
նշանակությունների գույացման ընթացքին:

Անվիճելի է, որ քննության ենթակա գերասույթը չի կարող բավարար նա-
խադրյալներ ստեղծել բացահայտելու նշված հորդորական ձայնարկության
որոշակի գործառույթները: Այդ իմաստով անհրաժեշտ է ծանոթանալ տվյալ
գերասույթն ընդգրկող նովելում պատկերված հիմնական իրադարձություննե-
րին, որոնց զարգացումը ցույց է տալիս, որ ղե ձայնարկությունը տվյալ խոս-
քաշարի ենթակարգային հարաբերություններում ձեռք է բերել նշանակալի
սյնային գործառույթություններ, որոնք դրսևորում են՝ 1. ստեղծված իրադարձու-
թյան հետ համակերպվելու հորդոր՝ ինչ անել նշանակությամբ, 2. ընդհան-
րացնող, 3. եզրակացնող նրբերանգներ: Նշանակալին այդ նրբիմաստները
բացակայում են համակարգային մեկնաբանության մեջ:

Այստեղ տեղին է նշել, որ տվյալ ձայնարկության ոճական-արտահայտ-
չական արժեքը ոչ թե սահմանափակվում է միայն զգացական վերաբերմուն-
քի արտահայտմամբ, այլև, ինչպես տեսանք, այն պայմանավորվում է նաև
հասկացական վերաբերմունքի դրսևորմամբ, ինչը հատուկ է գլխավորապես
լիանշակ բառերի գործառույթություններին:

Անդրադառնալով նախընթաց անգամի՝ մակբայական ու ածականական
ծավալումներին (նախընթաց անգամ ունենում են հիմնականում լիանշանակ
խոսքի մասերը):

Վերլուծենք հետևյալ օրինակը:

«Բայց ինչ եղավ ձիրոն: Մի սև արավոր երիտասարդ Կարմիր բլուրի
մատուռի մոտ դիրք մտած մեծ-մեծ կովում էր թընամու դեմ: Դիտակով
նայեցի՝ ձիրոն էր: Որքան աչքս կտրեց, ես տեսա նրան՝ սև արան հագին այդ
դիրքում հերոսաբար կովելիս: Վերջին գնդակը նա ուղղեց ճակատին և ընկավ
վարդանի մատուռի տակ» (ԽԴԻ):

Այստեղ մեզ հետաքրքրողը նախընթաց անգամի մակբայական փոխա-
րինման ոճական դրսևորումն է, ինչը, սակայն, անմիջական կապի մեջ է
տեքստում նրա որոշակի նշանակալին օժտվածության հետ:

Այսպես ուրեմն, վերլուծվող գերասույթում «դիրք մտած մեծ-մեծ կովում
էր թընամու դեմ» շարահյուսական կառույցն իմաստային առումով ձեռք
է բերել չափազանց կարևոր բեռնվածություն, որի շնորհիվ տվյալ հատվածում
նկարագրվող մյուս իրադարձությունների նկատմամբ աֆն նվաճել է գերիշ-
խող դիրք: Հատկանշական է, որ այդպիսի դիրք գրաված տվյալ ծավալուն միա-
վորը հանդես է գալիս իբրև նախընթաց անգամ, նույն գերասույթի հաջորդող
հատվածներում գործառույթը հերոսաբար կովելիս մակբայական փոխարին-
ման համար: Առաջին հայացքից սովորական թվացող այդ փոխարինման հետ,
սակայն, առնչվում է բավական նրբին մի խնդիր, որ, անտարակույս, ծառա-
ցել է նաև հեղինակի առջև: Դա մակբայական տարրի տվյալ փոխարինման
ընտրության հարցն է:

Սակայն հեղինակը գիտակցաբար տեղի չի տվել խոսքի արտաքին «շքե-
ղացման» հրապուրանքին և ճշմարտացիորեն հարազատ է մնացել ընդհան-
րական համատեքստի վիպասքային բյուրեղացված սկզբունքներին: Այդ իսկ
պատճառով նախապատվության արժանացած հերոսաբար կովելիս մակբա-
յական փոխարինումն իմաստային-ոճական առումով գրեթե չեզոքության
հասնող կիրառություն է, քանի որ տվյալ միավորի արտահայտած գործողու-
թյան հատկանիշը ցուցադրող անձնավորության համար այդ վարքագիծը
իսկապի վաստակում չի ակնկալում, այլ հետամուտ է լինում մարդկայնորեն

* Փոխարինվող կամ կրկնվող լեզվական միավորը նախընթաց է:

ապրելու նվազագույն մի ձգտման, որի համար պատվով մեռնելը, ըստ նրա, բոլորովին էլ խիզախություն չէ:

Հետևությունն ակնհայտ է: Ընդգծված լեզվական միջոցները ներդաշնակ հն իրենց արտահայտած պարզ ու ընդգրկուն բովանդակությանը՝ հենց այդ ընդունելի պարզության մեջ էլ դրսևորելով իրենց հուզականությունն ու արտահայտչականությունը: Դա կարևոր հանգամանք է, որը նրբանկատ զգացնել է տալիս առանձնացված հատվածում ընդգծված միավորների իմաստալին-ոճական արժեքի հիմնավոր զորեղացումը՝ միաժամանակ շարժամարհելով այն իրավացի պնդումը, որ նախընթաց անդամի մակբայական փոխարինման ոճական-արտահայտչական նշված արժեքի ձևավորման ընթացքը նույնպես չի սահմանափակվում միայն շարահյուսական այն կառույցով, որում ինքը դրսևորվում է, այլ այն իր ձևավորման վերջնական ավարտին է հասնում ու արժեքավորվում համատեքստային ծավալվող իրադարձություններում:

Նախընթաց անդամի մակբայական փոխարինումը, ելնելով համապատասխան տեքստի յուրահատկություններից, կարող է հուզական երանգ շարտահայտել:

Օրինակ.

«Ես ուղարկել եմ Ձեզ մի անգամ 10 օրինակ, իսկ այդ փոստով դարձյալ ուղարկեցի 30 օրինակ, քնդամենը 40 օրինակ» (ԲԵ):

Պաշտոնական կամ վարչագործարարական ոճով կազմված տեքստային համեմատաբար այս փոքրիկ հատվածում առարկայի քանակի չափը ճշգրտող ու հատկապես նրա քանակական տվյալները հանրագումարի բերող քնդամենը մակբայական փոխարինման համար իբրև նախընթաց անդամների հն գործառվում 10 օրինակ և 30 օրինակ խոսքային տարրերը: Այստեղ հատկանշական է, որ ներասույթային իրադարձություններում առարկաների անվանումների միջև կապն իրադրծվում է յուրահատուկ դրսևորումներով, որոնք ուղեկցվում են փաստերի ճշգրիտ, հետևողական ու հակիրճ շարադրությամբ, ոգտաբերված լեզվական միջոցների ուղղակի իմաստների առկայությամբ, ինչպես նաև երկիմաստ մտքերի բացակայությամբ, որոնք տվյալ դեպքում բացառում են նախընթաց ու փոխարինող անդամ փոխհարաբերություններում հուզականություն ու պատկերավորություն արտահայտող հասկացությունների դերը:

Յուրահատկությունների որոշ տարբերությամբ մոտավորապես համանման պատկեր է ստեղծվում մակբայական այլ փոխարինումների ոճական արժեքները դիտարկելիս: Ուստի, հարկ չհամարելով անդրադառնալ դրանց այլ մանրամասներին, կանգ առնենք նախընթաց անդամի ածականական ծավալումների իմաստային-ոճական արժեքների վրա:

Այդ իմաստով քննության ենթարկենք հետևյալ օրինակները.

1. Երենկ՝ ում խիղճը մշտամաքուր
Հազար վերքի է գթության քույր:
Երանի՝ ում ողջ կյանքը մաքուր
Ազգի վերքին է գթության քույր... (ՇՔ):
2. Քո բիրիլական անունն եմ սիրում,
Միրում եմ, այն էլ բիրիլական սիրով (ՊՍ):
3. Մե եմ վարսերդ, ինչքան ճեմակ է
Դեռ փակ կուրծքը քո,
Ավելի ճեմակ
Միշտ ահեղ ձյունից իմ Արարատի,
Որ փրկեց նույն
Ուրեմն՝ և քեզ,
Ինձ ու... մեր սերը,

Ավելի ներմալ, քանի որ նրան
իմ աչքերի պես և ոչ մի սև աչք
Դեռ չի ստվերիլ անգամ հայացքով (ՊՍ):

4. «Լեզվի բառապաշարը ըստ նրա մեջ մտնող բառերի ամենաընդհանուր իմաստների և ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունների բաժանվում է որոշակի խմբերի, որոնք կոչվում են խոսքի մասեր:

Լուսինյանային իմաստը բառի ամենաընդհանուր քերականական իմաստն է և մյուս քերականական իմաստներից տարբերվում է իր մեծ ընդգրկումով և առավել ընդհանրականությամբ» (ՄԱԺ):

5. «Դեռ ավելին, հարցեր կան, որոնցում հայ լեզվաբանությունը բավական հետ է մնում: Ռուս իրականության մեջ, օրինակ, մեր ժամանակներում՝ և՛ մի շարք բացատրական բառարաններ են լույս տեսել, որոնք վերահրատարակվել ու վերահրատարակվում են ուղղումներով ու լրացումներով, ապա մեղանում ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի կազմած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» լույս աշխարհ է եկել մի անգամ, ընդհատումներով՝ 1969—1980 թթ. և փաստորեն հայոց լեզվի մինչև 60-ական թվականների իրավիճակն է արտացոլում: Ուստի միանգամայն տեղին ու ժամանակին է պլանում հնչած պահանջը նաև այն մասին, որ մեզ հարկավոր են բացատրական, ճյուղային և որ բառարաններ» (ՍՀ):

Առաջին օրինակում մշտամաքում միավորը նախընթաց է մաքուր ածականի համար, իսկ երկրորդ օրինակում՝ իբրև առաջինը հանդես եկող բիրիլալանք: Երկրորդ ածականական միավորներն այստեղ զուտ խոսքի գոնազարդման նայատակ չեն հետապնդում: Երկու դեպքում էլ ընդգծված տարրերը դեպի իրենց են թեքում հատվածների իմաստային լծակները և ձուլվում համատեքստային բովանդակությանը՝ դրանով էլ իրենց գործառնությունները դարձնում գեղարվեստորեն պատճառաբանված, իսկ ոճական-արտահայտչական ուղղումով՝ լիովին արժեքավորված:

Իրոք, տեքստային առաջին հատվածում երանի է տրվում միայն մշտամաքում խիղճ ունեցող հազար վերքի գթության քրոջը և, ավելի թանձրացնելով խոսքը, երանի տալիս միայն ազգի վերքի այն գթության քրոջը, ում ողջ լայնքը մաքուր է: Փաստորեն մշտամաքում համադրական նախընթաց անդամը վեր է ածվել ողջ կյանքը մաքուր վերլուծական կապակցությանն ու գործառական նման նրբերանգով թարմացրել այն:

Երկրորդ օրինակում բիրիլալանք անուն ու բիրիլալանք սիրով արտահայտություններում ընդգծված ածականները, ճիշտ է, տարբեր իմաստներով են հանդես գալիս (համապատասխանաբար՝ հնամենի, աստվածաշնչաբար), այնուամենայնիվ այդ երկուսի տեքստային զուգադրումը խոսքը դարձնում է ավելի բանաստեղծական, հյութեղ և, որ առավել կարևոր է, գեղարվեստական առումով՝ կատարյալ ճշտության արտահայտություն:

Երրորդ օրինակում ներմալ ածականը կիրառվել է իբրև նախընթաց անդամ և նույն տեղում երկու անգամ կրկնվել ավելի ներմալ բաղդատական աստիճանով, Հոմանշային համապատասխան շարքում հատկապես այս բաղդարիչին առաջնություն տալն անմիջականորեն բխում է հեղինակի մտքի ու զգացմունքի արտահայտման բուն էությունից, որը ցանկացել է դրսևորել լեզվական նշված արտահայտչական ընտրովի ձևերում: Պարզապես հոմանշային նշված շարքի մյուս անդամներից (սպիտակ, կաթնագույն և այլն) թերևս ոչ մեկը չէր կարող արտահայտել հեղինակի երազած սիրո փակ կրծքի գույնը, որ Արարատի սնհալ ձյունից ավելի ճերմակ է և էլ ավելի ճերմակ, քանի որ բանաստեղծի աչքերի պես սև աչք դեռ չի ստվերել այն՝ անգամ հայացքով: Իսկ սև ու ներմալ ածականների (լրացում լրացյալներով հանդերձ) հակադրությունը վերլուծվող հատվածում ավելի է խորացնում կատարվող համեմատությունների իմաստային գունավորումը:

Ընտրված լեզվական հուզարտահայտչական միջոցների շահեկան օգտագործումն այստեղ գեղարվեստական խոսքը դարձրել է հուզառատ, ճոխ, պատկերավոր ու համոզիչ:

Չորրորդ օրինակում ամենաընդհանուր ածականը հանդես է եկել երկու անգամ, որից առաջինը երկրորդի համար նախընթաց է: Բերված հատվածի ընդհանրական իմաստի ձևավորման հարցում նշված միավորները բավական գործունեներ են կատարում, մինչդեռ դրանց հուզարտահայտչական հնարավորությունները տվյալ միջավայրում խիստ համեստ են: Չնայած երկու դեպքում էլ նշված ածականներն օգտագործվել են գերադրական աստիճանով, սակայն այս հանգամանքը գրեթե չի ազդում դրանց՝ դեպի հուզականություն մղող համարյա անշարժ ուժերի վրա: Դա բնական է: Եթե գեղարվեստական տեքստում բառերն օգտագործվում են ոչ իրենց ուղղակի նշանակություններով, և նկարագրվող իրադարձությունների առարկայականությունն ապահովվում է բառերի փոխաբերական նշանակություններով, ապա, տվյալ դեպքում, բառերը գերազանցապես հանդես են գալիս իրենց ուղղակի նշանակություններով: Այլ կերպ ասած, եթե հեղինակը տվյալ դեպքում օգտագործել է բառի ամենաընդհանուր իմաստ արտահայտությունը, ապա իրականում էլ նա նկատի ունի հենց բառի ամենաընդհանուր նշանակությունը: Պարզապես ասվածի ու իրականության միջև գոյություն ունի համապատասխանական (կոռելյատիվ) փոխադարձ հարաբերակցություն:

Հստ էության գիտական տեքստն իր սեղմությամբ, սահմանումների համոզությամբ ու դատողությունների հետևողականությամբ խստորեն սահմանափակում է չեզվակալի միջոցների ոճական-արտահայտչական լայն հնարավորությունները:

Հինգերորդ օրինակում բացառական ածականը գործառվել է երեք անգամ: Դրանցից առաջինը ծառայում է իբրև նախընթաց անգամ մնացած երկուսի համար: Ածականական այդ բոլոր ծավալումներն էլ օգտագործվելով միևնույն որոշյալի (բառարանի) հետ, կազմում են քննության ենթակա գերասույթի իմաստային կենտրոնը: Նշված ծավալումների արժեքն ավելի ակնհայտ է դառնում, քանի որ տեքստի բնույթից ելնելով, գերասույթում առաջ քաշված ու նկարագրված երևույթները համապատասխանում են իրականությանը և հիմնված են ճշգրիտ դատողությունների ու առկա փաստերի վրա: Իրերի դրության նման ներկայացմամբ տվյալ տեսակի տեքստ հորինողը նպատակադրված ձգտում է ստեղծել, ինչպես տեսնում ենք, ներազդման ու ընդհանուր վերաբերման արժեքի մթնոլորտ, որի պայմաններում ի հայտ գան որոշակի հնարավորություններ՝ առաջարկված մտահղացումներն իրագործելու ուղղությամբ: Ահավասիկ, հեղինակի համոզմամբ համապատասխան բառարանների սակավությունն ազդում է նաև հայ լեզվաբանության զարգացման վրա: Այն հաղթահարելու համար անհրաժեշտ է բացատրական ու ճյուղային նոր բառարանների հրատարակում:

Տեքստային տվյալ բնույթի նպատակը հասկանալի է. ոչ պատահական լեզվական միջոցների տեղին զուգադրումով, մաքերի տրամաբանական կուռ ձևավորմամբ որոշակի վերաբերմունք ստեղծել ու ներգործել դիմացինի վրա՝ անհրաժեշտ հետևություններ անելու համար:

Այսպիսով, նկատի ունենալով նախընթաց անդամի մակերայական փոխարինումների ու ածականական ծավալումների գործունե մասնակցությունը գործառական տարբեր ոճերի պատկանող տեքստերի իմաստային-ոճական հնարավորությունների արժեքավորման գործում, կարելի է պնդել, որ ինչպես մյուս, այնպես էլ բառաքերականական այս դասերին վերաբերող լեզվական միջոցների հուզարտահայտչական կարողությունները հիմնականում բնութագրվում են տեքստային միջավայրում:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՄԵ — Չ. Մաթևոսյան, Երկեր, հ. 1, Երևան, 1985:

ՄԱԾ — Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1983:

- ԳՍԿ — Գ. Սևակ, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1973:
 ՍՂԶ — Ստ. Ջուրյան, Հայկական նովելներ, Երևան, 1972:
 ԼԴՌ — Խաչիկ Դաշտենց. Ռանչյուարների կանչը, Երևան, 1984:
 ԲԿ — Բուքֆոր, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1958:
 ՇԲ — Շիրադ, Քնար Հույսատանի, Երևան, 1980:
 ՈԶ — Սովետական Հայաստան, 8. 1. 1987:

СЕМАНТИКО-СТИЛИСТИЧЕСКИЕ ПРОЯВЛЕНИЯ НЕПОЛНОЗНАЧНЫХ ЧАСТЕЙ РЕЧИ

Б. К. ҚАЗАРЯН

Р е з ю м е

При исследовании рассматриваемого вопроса основное внимание уделяется выяснению как экспрессивно-стилистических возможностей неполнозначных и полнозначных единиц на текстуально-коммуникативном уровне разных лексико-грамматических классов, так и их роли в формировании структуры текста. На основе конкретных примеров показывается семантическая неоднозначность служебных слов, которая проявляется только в контексте.